վարէր զհայրապետութիւն իւր ի կամս Աստուծոյ, և անաչառ էր դատաստան նորա և յոյժ օրինաւոր և հասակաւն ցանկալի։ Եւ եղև նախանձիլ իշխանացն Յունաց ընդ նա, վասն ասելոյ նմա թէ Ռամիկք են որ պահեն զօրէնս Աստուծոյ և երկնչին ի նմանէ, իսկ օրինազանցք ամենայն փարթամք են և մեծատունքն. քանզի զապաճի ոմն օրինազանց ոչ հրամայեաց թաղել յիրիցանց և յաշխարհականաց, որում տեարքն յանծանօթ տեղեաց զբեռնակիր հայս կաշառօք տարեալ՝ նոքա թաղէին զնա. սոյնպիսիք բազում։ Վասն որոյ մտեալ ի խորհուրդ. և գլուխ էր Փափազօղլի ոմն ի ժամանակին իշխան մեծ, և մտեալ առ վէզիրն, հանեալ զնա յաթոռոյն[1]) և զայլ ոմն ըստ կամաց իւրեանց նստուցին և զայն աքսորեցին։ Եւ նոքա ետուն աքսորողացն գրամ խորհրդեամբ պօստանճի պաշուն, զի ի վերայ ծովուն ի գնալն խեղդամահ արարին և արկին ի խորս ծովուն։ Եւ յետ աւուրց լուեալ Պէքտաշ աղային, որ էր նմա սիրելի, հարցանէր վէզիրին թէ Ո՞ւր է Բարթէնիոսն. և նայ կոչէր զՓափազօղլին, և չկարէր տալ պատասխանի. վասն որոյ նոյն ժամայն հրամայեաց կախել զնա զգեստիւն և կերպարանաւն ի դուրս պատրիարքարանին Յունաց ի տեսս ամենայն ազգաց։

Յաւուրս յայսոսիկ Յովանէս անուն վարդապետ ոմն Վանեցի եկեալ ի քաղաքս. և ոչ կամէին բնաւ թողուլ սևագլուխ, բայց ի խնդրոյ ոմանց վանեցոց ծանօթից նմա՝ բերին և նստաւ յեկեղեցի Սուրբ Աստուածածնին (Ռէքէ)։

Իսկ ասացաք՝ յետ մահուանէ թագաւորին զոր արարին, էին օճաղի աղայք Մուսլուհատին, Պէքտաշ

1) աթոռոյն.